ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

30 մայիսի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

71
(2921)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՒՅՔԸ՝ ԿԿՀ ՏԵՍԱԴԱՇՏՈՒՄ

2023 թվականի վերջին հայտնի դարձավ, որ Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանի ամուսնու ընտանիքն էջմիածնում առանձնատների կառուցման բիզնես է սկսել: Հենց այս նպատակով է համայնքի ղեկավարը, որ մոռացել է համայնքի ղեկավարի իր պարտականությունների մասին, գործընկերների օգնությամբ ձեռք բերել համայնքային հողատարածք եւ, չսպասելով թույլտվություններին, հողային եւ բետոնացման աշխատանքներ կատարել: Այս ամենը չի վրիպել նաեւ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տեսադաշտից:

Հրապարակման մեջ առկա շրջանառվող տեղեկությունների համաձայն՝ Վաղարշապատ համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը շինարարական թույլտվություններ է տվել իր հետ փոխկապակցված անձի՝ իր ամուսնու՝ Արամայիս Միրզոյանի մորը պատկանող «Նարե Պլյուս» ՍՊ ընկերությանը: Միաժամանակ, հրապարակման մեջ հիշատակվում է, որ «Նարե Պլյուս» ՍՊ ընկերությանը նշված շինարարական թույլտվությունները տրամադրվել են շինարարությունը սկսելուց հետո միայն, իսկ համայնքի ղեկավարի համապատասխան որոշումները չեն հրապարակվել համայնքապետարանի կայքէջում:

Ըստ Հանձնաժողովի՝ հրապարակման մեջ անդրադարձ է կատարվում նաեւ Դիանա Գասպարյանի ամուսնու հորը՝ Աշոտ Միրզոյանի կողմից իր աշխատակցին՝ Շ. Շահինյանին փոխառության տրամադրման եւ նշված փոխառությամբ գնված համայնքային սեփականությամբ հողատարածքը Աշոտ Միրզոյանի կնոջ բաժնեմասնակցությամբ՝ «Նարե Պլյուս» ՍՊ ընկերությանը վաճառելու դեպքին:

Հանձնաժողովը սույն գործը քննել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված շահերի բախման կարգավորումների համատեքստում, որի շրջանակում ուսումնասիրվել են Դիանա Գասպարյանի եւ Արամայիս Միրզոյանի հայտարարագրերը, իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգում առկա, ինչպես նաեւ Հանձնաժողովին հասանելի պետական տեղեկատվական այլ շտեմարանների տվյալները: Այժմ հիշյալ ուսումնասիրությունը ընթացքի մեջ է:

Հավելենք, որ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ենթադրյալ հանցագործության հատկանիշները քննելու նպատակով Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 5-ին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն:

Ներկայիս իշխանության ժողովրդավարությունը հենց այս տեսքն ունի, ամենուր «պոզով-պոչով» կոռուպցիոներներ են:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ հայրենի իշխանությունները տարբեր պաշտոնական հանդիպումների ժամանակ՝ տետ-ա-տետ զրույցներում, միմյանց հուսադրում են, թե Բագրատ Սրբազանի առաջնորդած շարժումն իրեն արդեն տապալել է: Իշխանական մեր աղբյուրները փոխանցում են, որ այդ հանդիպումների ժամանակ բոլոր իշանականները ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին հաճոյախոսում են, հայտարարում են, թե ինքը հուսալքվելու պատճառ չունի, քանի որ ժողովուրդը փողոց դուրս չի գալիս: Կառավարության մեր աղբյուրները եւս փոխանցում են, որ ամենօրյա ռեժիմով Նիկոլ Փաշինյանին զեկուցում են, որ շարժումը մարել է, ու մի քանի օր անց ոստիկանների ճնշման ներքո այլեւս մարդիկ փողոց դուրս չեն գալու: Բայց ասել, որ իշխանություններն անհանգիստ չեն Բագրատ Սրբազանի գլխավորած շարժումից սխալ կլինի, քանի որ ՔՊ խմբակցությունն ու հայրենի կառավարության ողջ կազմը ուշի-ուշով հետեւում են շարժման քայլերին: Ֆեյքային անդադար գրոհներ կազմակերպում Սրբազանի եւ նրան սատարողների նկատմամբ: Հույսը ոստիկանների բիրտ ուժ կիրառելն է, Սրբազանի հասցեին վարկաբեկող տեղեկություններ տարածելը, որն էլ կնպաստի, որ շարժումը փողոցում այլեւս չշարունակվի. իսկ այսօր Բագրատ Սրբազանը բոլորին կառավարության նիստի է հրավիրել, որը եւս մեկ մտահոգության առիթ է տվել հայրենի իշխանություններին: Կառավարությունը աննախադեպ ուժեղացրել է անվտանգությունը՝ կառավարության մոտ անկանխատեսելի բաներ թույլ չտալու համար:



ՔՊ-ն, Անդրանիկ Քոչարյանի գլխավորությամբ, տապալել է 44-օրյա պատերազմի զեկույցի հրապարակումը. դրա աշխատանքները տեղում դոփում են: Այսպիսով՝ 44-օրյա պատերազմի հանգամանքները քննող հանձնաժողովը, որը հենց Անդրանիկ Քոչարյանն էր ղեկավարում, իր վերջին նիստը հրավիրել էր նախորդ տարի՝ դեկտեմբերի 3-ին, արդեն շուրջ հինգ եւ ավելի ամիս է՝ ընթանում են ամփոփիչ զեկույցի նախապատրաստական աշխատանքները: Դեռ ամիսներ առաջ իր հարցազրույցներից մեկում Անդրանիկ Քոչարյանը հայտարարել էր. «Ես կարծում եմ, որ մինչեւ մայիսի վերջ կներկայացնենք 44-օրյա պատերազմի հարցով քննիչ հանձնաժողովի զեկույցը»: Մայիսն արդեն ավարտվում է, բայց զեկույցից դեռ նորություն չկա: «Ժողովուրդ» օրաթերթը ավելի վաղ գրել էր նաեւ, որ հանձնաժողովի անդամները մտադիր են եղել մինչեւ մայիս ավարտել աշխատանքները, որպեսզի զեկույցը հրապարակվի, սակայն Անդրանիկ Քոչարյանն ասել էր, որ չեն հասցնի, շատ աշխատանք կա անելու: «ԱԺ կանոնակարգ» օրենքի 25-րդ հոդվածը սահմանում է՝ քննիչ հանձնաժողովն իր գործունեության արդյունքով Ազգային ժողովի նախագահին ներկայացնում է զեկույց, որը ներառում է հանձնաժողովի ստեղծման համար հիմք հանդիսացած հարցի վերաբերյալ պարզված փաստերը, ինչպես նաեւ դրանց առնչությամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ հանձնաժողովի եզրահանգումները: Ազգային ժողովի նախագահին ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, զեկույցը բաց քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստում, հրապարակվում է նաեւ ԱԺ կայքում, իսկ փակ մասը քննարկվում է գաղտնի ռեժիմով: Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ իշխանականները ինչ նպատակի համար փորձում էին այդ զեկույցը ծառայեցնել, այն է՝ ընդդիմադիրներին ճնշելու եւ քրեական պատասխանատվության ենթարկելու, դա չի հաջողվում: Այդ պատճառով էլ ձգձգվում է զեկույցի հրապարակումը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այսօր ԱԺ հանձնաժողովներում շարունակվելու են ՀՀ 2023թ.-ի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության նախնական քննարկումները: Խորհրդարան են գնալու Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը եւ մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը՝ զեկույցը ներկայացնելու: Նշենք, որ ՀՀ 2023թ.-ի պետական բյուջեի կատարման մասին տարեկան զեկույցները նախ քննարկվելու են հանձնաժողովներում, հետո արդեն ԱԺ քառօրյա նիստերում՝ կրկին վարչապետի, նախարարների եւ մյուս պաշտոնյաների մասնակցությամբ:

ԶՐՈՒՅՑ

«ԿՐՈՆԸ ՄՇԱԿՈՒՅԹ Է, ՈՐԻՑ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԶՐԿԵԼ»

Մայիսի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն եպիսկոպոսաց դասի ուղեկցությամբ այցելել էր Մարդարադատի հուշահամալիր՝ հայրապետական աղոթք անելու մայիսյան հերոսամարտերի զոհերի հիշատակին: Հուշահամալիրին մոտենալիս ոստիկանական ուժերը փակել էին հոգեւորականների ճանապարհը՝ չթողնելով վերեւ բարձրանալ: Սակայն, հակառակ ոստիկանական դատին, Վեհափառ հայրապետն ու իրեն ուղեկցող հոգեւորականները բարձրացել էին հուշահամալիր, աղոթք արել մայիսյան հերոսամարտերում զոհված հայորդիների հոգիների համար:

Եղելությունն աննախադեպ էր հայ իրականության համար եւ բացասական արձագանքի է արժանացել հասարակության զգալի հատվածի կողմից:

Հայ Առաքելական եկեղեցու նկատմամբ առաջացած բողոքի ալիքի եւ իշխանության վերաբերմունքի մասին «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քաղաքային պլանավորող Վիկտոր Մնացականյանի հետ:

-Պարոն Մնացականյան, երեկ հերթական խայտառակ դեպքը արձանագրվեց, երբ ոստիկանները փորձեցին խոչընդոտել կաթողիկոսի մուտքը Սարդարապատ: Ի՞նչ գնահատական կտաք:

-Ես հետ գնամ 2018 թվական. Հայրապետի անհասկանալի շարժումը, որը 2018 թվականի եզակի շարժումներից էր, որը չհասկացանք՝ ում կողմից էր կազմակերպված, ընդհանրապես նպատակը որն էր շարժման: Այն ցրվեց, որովհետեւ ինչ-ինչ պատճառներով երեւի որոշակի հրահանգներ էին տրվել:

Երկրորդ՝ ամենազարհուրերի բանը 2018 թվականին ինձ համար, ամեն դեպքում, եւ կարծում եմ՝ շատ երեւանցիների եւ հայերի համար մշակույթի նախարարության փակվելն էր: Կատարվեցին անհասկանալի, բազում անիմաստ քայլեր, կարելի է ասել՝ հակապետական, հակահայկական: Նույն կերպ գյուղատնտեսության նախարարությունը փակվեց, եւ այդ քայլով մենք կարծես գյուղացիներին ավելի ստորադասեցինք, թե այդքան կարեւոր չէ ձեր աշխատանքը, այդքան կարեւոր չէ ձեր արտադրանքը հանրապետության համար, այսպես՝ նաեւ մշակույթը: Մշակույթից մեզ բոլորիս ուզում են զրկել: Հասկանո՞ւմ եք, որ շատ երկրներում անգամ կրոնը մշակույթի մի մաս է կազմում: Մշակույթը, իհարկե, նախարարությունում չի որոշվում, բայց հետագա կառավարումով նաեւ մենք տեսանք, որ նախարարությունում մեկը մյուսի հետեւից անփորձ, նաեւ ոչ գիտակ մարդիկ նշանակվեցին: Չեմ ասում՝ ներկայիս, չգիտեմ, օրինակ, նույն փոխնախարարների վիճակը. այսինքն՝ մի փոխնախարարը, որը ամենակարեւոր բաները պետք է սպասարկի, ներկայիս պաշտոնյաներից մեկի դասարանցին է: Մենք տեսնում ենք այսօրվա քաղաքական իշխող թիմի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության մոտեցումը եկեղեցու հանդեպ:

Այնպիսի տպավորություն է, որ իրար հերթ չտալով՝ փորձում են վիրավորել, ու վատը այն է, որ ես նկատում եմ, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունից խոսում են այն մարդիկ որոնք տարբեր քրեական գործերով են հարուստ: ՔՊ-ի մեջքին հիմա այնպիսի մի թիմ է, ովքոնք ավելի շատ փորձում են վարկաբեկել եկեղեցին. դա է վատը:

Աջակցում ու հավատում եմ սրբազան պայքարին. Սրբազան հայրը շատ արժանապատվորեն շարժումը տանում է առաջ՝ առանց ինչ-որ բորբոքումների:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁԸ՝ «ՍԵՎ ՈՒ ՍՊԻՏԱԿ» ՓԱՐԹԻՒ ՄԱՍԻՆ

Աննա Հակոբյանի օգնական, «Պերֆեկտ TV»-ի տեսանյութերի տեքստերը կարդացող Ստելլա Սարուխանյանը «Սեւ ու սպիտակ» անվանումով մի միջոցառում էր կազմակերպել, որին մասնակցել էր նաեւ Աննա Հակոբյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մայրը, ՔՊ-ական Գնել Սարգսյանը եւ այլք:

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ վարչապետ Նիկոլ Փաշինյանից հետաքրքրվեց, թե ինչպես է վերաբերվում այդ փարթիի ժամանակ երաժշտություն միացնելուն, երբ այդ օրը Լոռու մարզում աղետ էր:

-Պարոն Փաշինյան Ձեր քաղաքական թիմը անընդհատ հայտարարություններ է անում, որ Հայաստանում աղետի ֆոնին պետք չէ անընդհատ երաժշտություն միացնել, փողոցներ փակել, խրախճանք կազմակերպել, սակայն Ձեր տիկնոջ մասնակցությամբ մեծ խրախճանք է կազմակերպվում, «Սեւ ու սպիտակ» երեկույթ է կազմակերպվում: Ինչպե՞ս եք վերաբերվում սրան, արդյո՞ք սա նորմալ է:

-Նախ՝ խրախճանք չի. սկսենք դրանից: Ինչքան, որ ես եմ տեղյակ, այդ միջոցառումը կազմակերպված է եղել 44-օրյա պատերազմում եւ առհասարակ պատերազմում զոհված զինվորների մայրերի համար, այսինքն՝ 5-6 ամիս առաջ պլանավորված միջոցառում է եղել: Ես, անկեղծ ասած, շատ լավ չգիտեմ, բայց որքան տեղյակ եմ՝ այդ միջոցառման նպատակներից մեկը պատերազմի ընթացքում զոհված զինվորների մայրերին ամոքելն ու սփոփելն է եղել՝ փորձելու օգնել նրանց, որպեսզի սեւը չլինի գերիշխող:

-Սակայն, հանրահավաքը նույնպես ավելի վաղ էր պլանավորված, քան արտակարգ իրավիճակը Հայաստանում: Միջոցառմանը հրավիրված էին զոհված զինծառայողների՝ հավաքի մասնակից ծողները:

-Ես չեմ կարող պատասխանել, որովհետեւ ես չեմ մասնակցել եւ չգիտեմ: Բացի այդ, ցանկացած քաղաքացի կարող է գնահատել՝ որտեղ լինի երաժշտություն, որտեղ չլինի, որտեղ հագնեն սեւ եւ որտեղ՝ սպիտակ:

Ճեպազրույցի վերջում Նիկոլ Փաշինյանը, լրագրողի հարցին ի պատասխան, անդրադառնալով Բագրատ Սրբազանի կողմից հնչեցված հանդիպման հրավերին՝ պատասխանել է՝ դրա համար ընթացակարգեր կան, եւ ովքեր ցանկանում են իր հետ հանդիպել կարող են հերթագրվել:

Հիշեցնենք, որ իշխող ուժը երկրի ղեկավարությունը ստանձնել է փողոցային ակցիաներից եւ շարժումից հետո, որի ընթացքում շարժման առաջնորդ Նիկոլ Փաշինյանը հանդիպման էր հրավիրել ՀՀ 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանին, ինչը կայացել էր հրապարակում՝ «Արմենիա Մարիոթ» հյուրանոցում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՔՆՆԱԴԱՏՈՂՆ ԱՍՅՕՐ ՊԱՇՏՈՆՅԱ Է

3 տարի առաջ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը պահանջող եւ դեռ ավելին՝ Կիրանցում առանց պետհամարանիշների, բերետավորների պաշտպանությամբ շրջող Սերգեյ Պետրոսյանը մայիսի 28-ին Նիկոլ Փաշինյանի առաջարկությամբ գեներալ-մայորի կոչում է ստանում: Հիմք ընդունելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկությունը՝ նախագահ Վահագն Խաչատուրյանը ստորագրել էր հրամանագիր, որով գեներալ-մայորի զինվորական կոչում էր շնորհվել ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի ռազմատեղագրական ծառայության պետ, գնդապետ Սերգեյ Հովսեփի Պետրոսյանին:

Այս կոչմանն արժանանալու ուշագրավ հանգամանքն այն է, որ 44-օրյա պատերազմից մեկ տարի հետո՝ 2021 թվականի փետրվարի 25-ին, ԶՈՒ ԳՇ նախկին պետ Օնիկ Գասպարյանը պահանջում էր վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը, ու այդ հրաժարականին միացել էին ՊՆ մի շարք գնդապետներ, գերերալներ ու վարչության պետեր. ու այդ միացողներից մեկը հենց Սերգեյ Պետրոսյանն էր: Միգուցե նրան կոչման են արժանացրել Կիրանցում առանց պետհամարանիշի շրջելու եւ բերետավորներին պաշտպանելու գործը լավ կատարելու համար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿՅԱՆՔԻՑ ԶՐԿՎԵԼՈՒ 69 ՓՈՐՁ

Մայիսի 26-ին՝ ժամը 18:30-ի սահմաններում, 42-ամյա Խ.Հ.-ն ահազանգել է իրավապահներին եւ հայտնել է, որ անցել է «Հաղթանակ» կամրջի արգելապատնեշը եւ ցանկանում է ինքնասպանություն գործել: Արդյունքում իրավապահները շտապել են դեպքի վայր ու անցկացված բացատրական աշխատանքների արդյունքում նրան անցկացրել են անվտանգ գոտի եւ հեռացել:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները բացահայտել են, որ վերոնշյալ քաղաքացին կատարել է ընդհանուր 69 ինքնասպանության փորձ ու այդ ճանապարհով փորձում է ուշադրություն գրավել իր խնդիրների վրա:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում՝ նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի երկու գլխավոր օպերլիազորներ տնտեսվարողներից ստացել են ընդհանուր 1,500,000 ՀՀ դրամ կաշառք՝ նրանց կողմից կատարված հարկային օրենսդրության պահանջների խախտումները չարձանագրելու համար:

Մասնավորապես՝ նախաքննությամբ հիմնավորվել է, որ ավագ օպերլիազոր Կ. Ա.-ն իր գործընկերոջ՝ ավագ օպերլիազոր Վ. Ա.-ի հետ հայտնաբերել են անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային օրենսդրության պահանջների առերեւույթ խախտումների հատկանիշներ՝ կապված իրացման շրջանառության հետ: Այդ կապակցությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չանցկացնելու, ինչպես նաեւ հետագայում հնարավոր ստուգումների ընթացքում կատարված խախտումները հայտնաբերվելու դեպքում պատասխանատվությունից խուսափելուն աջակցելու նպատակով՝ ՊԵԿ վերը նշված պաշտոնատար անձինք ձեռնարկատիրոջից պահանջել եւ 2023 թվականի դեկտեմբերի 29-ին նրանից որպես կաշառք ստացել են 1,000,000 ՀՀ դրամ, որը բաժանել են միմյանց միջեւ:

Կաշառք ստանալու համար ՊԵԿ գլխավոր օպերլիազորներ Կ. Ա.-ին եւ Վ. Ա.-ին մեղադրանքներ են ներկայացվել:

Կ. Ա.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննվելու համար:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԲՆԱԿԱՆ ԱՂԵ՞Տ, ԹԵ՞ ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆ

Վաղ առավոտից համացանցում շրջանառվում է ապրիլի 19-ի ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան էջի հայտարարությունը, որում ասվում է՝ ««ՁորաՀԷԿ-ի» շահագործման ընթացքում էներգահամակարգի աշխատանքի խափանումներով պայմանավորված, առաջիկայում հնարավոր է կայանի կանգ, որն էլ իր հերթին մինչեւ օգոստոս ամիս կարող է հանգեցնել ջրի բացթողումների կայանի ջրամբարից:

Վերջինս կարող է Ձորագետ եւ Դեբետ գետերի վարարումների պատճառ դառնալ:

Վտանգներից խուսափելու համար հորդորում ենք ափամերձ տարածքներում ցուցաբերել առավել զգոնություն»: Շատերը ասում են, որ մայիսի 26-ին տեղի ունեցած աղետի պատճառը հենց դա է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Լոռու մարզի մարզպետ Արամ Ղազարյանի հետ՝ պարզելու, թե արդյոք հնարավոր է աղետի պատճառը լինի հայտարարությունում նշվածը, որին ի պատասխան ասաց, որ հնարավոր չէ, որ դրանք փոխկապակցված լինեն:

«Ո՞նց եք կարծում, որ նման բան հնարավոր լիներ արդյո՞ք համապատասխան ընթացակարգով գործընթաց սկսված չէր լինի, եւ բացի դա, այդ օրը միայն Ալավերդիում չի եղել, Տաշիրից սկսած ամբողջ տարածաշրջանում՝ Գյուլագարակ համայնք, Փամբակ այդ հատվածներից սկսած մեծ վնասներ են հասցվել, հիմա ի՞նչ կապ ունի այդ հրապարակումը»:

ՄՏԱԴԻՐ Է ՍՏԵՂԾԵԼ ԳԼՈԲԱԼ ՑԱՆՑ

«Եվրամիությունը մտադիր է պաշտպանական համաձայնագրերի ցանց ստեղծել երրորդ երկրների հետ եւ կոչ է անում բոլոր շահագրգիռ կողմերին միանալ դրան», - հայտարարել է ԵՄ արտաքին քաղաքականության ղեկավար Ժոզեպ Բորելը, բացելով Բրյուսելի Շումանի ֆորումը, որը նվիրված է անվտանգության խնդիրներին:

Իր ելույթում արտաքին քաղաքականության պատասխանատուն զգուշացրել է, որ ԵՄ-ն մտադիր է արագորեն դառնալ «համաշխարհային հարթակում պաշտպանական եւ անվտանգության ունակ խաղացող»: Նրա խոսքով, Եվրոպայում իրենք «չափազանց սովոր են խաղաղությանը», բայց «խաղաղությունը իրերի սովորական կարգը չէ», հակամարտությունը «ավելի շատ նորմ է»: Բորելը կարծիք է հայտնել, որ Արեւմուտքն այլեւս չի օգտագործում ուժի ուժը՝ իր կամքը ուրիշներին թելադրելու համար: Ըստ նրա՝ դա եղել է «շատ տարիներ առաջ»:

Արտաքին քաղաքականության ծառայության ղեկավարը նշել է, որ աշխարհում աճող լարվածության պայմաններում «բացարձակապես ամեն ինչ սկսում է օգտագործվել որպես զենք»:

ՏԵՂԱՇԱՐԺ՝ ԱՆՏԱՌՆԵՐՈՎ

ՈՐՈՇ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ ԴԵՌ ՓԱԿ ԵՆ

Մայիսի 25-26-ի հորդառատ անձրեւների հետեւանքով Լոռու եւ Տավուշի մարզում մի քանի գետեր վարարել են, դուրս եկել իրենց հիմնական ուղուց եւ ավերել մի շարք համայնքներ. ավելի շատ վնասներ հասցրել է Դեբեդ գետը, որի վարարման հետեւանքով քանդվել է Մ-6 միջպետական ճանապարհը, որը Ախթալա տանող միակ ճանապարհն է:



Տեղի բնակիչներից «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգում են. նրանց խոսքով՝ ճանապարհի փլուզումից հետո կան վարորդներ, ովքեր մարդկանց տեղափոխում են անտառներով 10.000-ից 15.000 դրամի դիմաց:

«Նախորդ օրը մի հատ ավտո պիտի գար Երեւան. էվակուատորով այդ ճանապարհը անցկացնելու համար 40.000 դրամ փող ուզեցին, հիմա արդեն դարձել է 50.000: Կիրակի օրվանից ջուր չկա, արդեն 4-րդ օրն է: Նախնական ասել են, որ վաղը պիտի լինի, բոլոր գյուղերում կան բացի Ախթալայից»:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Տարածքների կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության նախարարի մամուլի քարտուղար Սոնա Հարությունյանի հետ՝ հասկանալու համար՝ վերահսկվում է ճանապարհը նախարարության կողմից, որին ի պատասխան մեզ ասացին, որ իրենք չեն տիրապետում նման տեղեկատվության:

«Եթե մարդիկ ինչ-որ տեղափոխման անհրաժեշտություն են ունենում՝ կապվում են փրկարար ծառայության հետ: Նրանք էլ իրենց հերթին ամեն րոպե կապի մեջ են բնակիչների հետ, գյուղի վարչական ղեկավարի միջոցով ցանկացած կարիքի մասին բարձրաձայնում են: Այնտեղ շատ մեծ տեխնիկա է կարողանում հասնել, որոնք որ ապահովվում են սնունդը: Դեպքի վայր այլ վարորդներ չեն կարող գնալ, այնտեղ միայն փրկարար ծառայությունն է գնում, ցանկացած մարդ ելումուտ չունի»:

Հիշեցնենք, որ մայիսի 26-ին Լոռիի եւ Տավուշի մարզերում նախորդ գիշեր տեղացած հորդառատ անձրեւների հետեւանքով Դեբեդ գետը վարարել էր, ինչի հետեւանքով փլուզվել են ճանապարհներ, կամուրջներ, տներն ու ավտոմեքենաները հայտնվել են ջրի տակ, արգելափակվել է մարդկանց տեղաշարժը, փլուզվել են կամուրջներ: Վարարման հետեւանքով Մ-6 միջպետական ճանապարհը երկկողմանի փակ է երթեւեկության համար: Դեբեդի հունը երեկ 6 մետրով բարձրացել էր, «Ալավերդի-Արճիս-Նոյեմբերյան» 530 մմ-ոց ջրատարը հայտնվել է ջրի տակ, ինչի հետեւանքով դադարեցվել էր 16 համայնքների ջրամատակարարումը, որն այսօր արդեն վերականգնվել է: Հեղեղի հետեւանքով այս պահի դրությամբ կա 4 զոհ: ՇՄՆ-ից հաղորդում են, որ երեկ՝ ժամը 08:00-ի դրությամբ, նախորդ օրվա 08:00-ին դիտված ջրի մակարդակների համեմատ դիտվել է ջրի մակարդակի նվազում՝ Դեբեդ գետի Այրում դիտակետում 105 սմ-ով , Ձորագետ գետում՝ 70 սմ-ով, Փամբակ գետում՝ 50 սմ-ով, Տաշիր գետում 57 սմ-ով:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՓԱԿԵԼ ԷԻՆ ԵՐԵՎԱՆ–ՎԱՐԴԵՆԻՍ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Քաղաքացիները երեկ մայրաքաղաք Երեւանում անհնազանդության ակցիաներ են իրականացրել: Կեսօրին հայտնի դարձավ, որ փակ է եղել նաեւ Երեւան-Վարդենիս մայրուղին: Քաղաքացիները արգելափակել են մայրուղին Նորատուսի հատվածում:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել Վարդենիսի համայնքապետ Ահարոն Խաչատրյանի հետ պարզելու համար, թե ինչու է արգելափակված ճանապարհը, սակայն մեր զանգերը մնացին անպատասխան: Այնուամենայնիվ հաջողվեց կապ հաստատել Նորատուսի վարչական ղեկավարի՝ Անդրանիկ Գրիգորյանի հետ:

Մեզ հետ զրույցում Գրիգորյանն ասաց. «Նորատուսի շրջանում չի փակվել ճանապարհը, Հայրեվանքի հատվածվում է փակվել: Նորատուսի մոտ չի փակվել, բայց փակողների մեջ նորատուսցիներ են եղել, մարտունեցիներ, գավառցիներ, վարդենիսցիներ, հայրիվանքցիներ, բոլոր տեղերից եղել են: Բայց ընդամենը 5 րոպե է փակ եղել»:

Փորձեցինք նաեւ ճշտել, թե ի՞նչ պատճառով է փակվել ճանապարհը, սակայն Նորատուսի վարչական ղեկավարն ասաց, որ ճանապարհը արգելափակելու պատճառը չի իմացել:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀԻ ՓՈԽԱՐԵՆ ԿՍՏՈՐԱԳՐԻ

Վրաստանի խորհրդարանի խոսնակ Շալվա Պապուաշվիլին չի ակնկալում, որ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին կստորագրի «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքը, որն օրենսդիր մարմինն ընդունել է մայիսի 28-ին՝ հաղթահարելով նախագահի վետոն: Պապուաշվիլին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է, որ ինքը կստորագրի փաստաթուղթը:

««Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին» օրենքը հենց երեկ ուղարկվել է նախագահի աշխատակազմ: Հասկանալի է, որ նա (Զուրաբիշվիլին) մեծ հավանականությամբ չի ստորագրի այն: Հետեւաբար, այս օրենքը կստորագրեմ ես», - նշել է խորհրդարանի խոսնակը:

Ընթացակարգի համաձայն՝ վետոն հաղթահարելուց հետո օրենքը եռօրյա ժամկետում կրկին նախագահին է ուղարկվում ստորագրելու համար: Եթե պետության ղեկավարը հինգ օրվա ընթացքում այն չստորագրի, ապա օրենքը ստորագրում եւ հրապարակում է խորհրդարանի խոսնակը, որից հետո այն ուժի մեջ է մտնում:

Օրենքով նախատեսվում է, որ հասարակական կազմակերպությունները եւ ՁԼՄ-ները, որոնք իրենց ֆինանսավորման 20 %-ից ավելին ստանում են արտերկրից, գրանցվեն որպես «օտարերկրյա ուժի շահերը հետապնդող» կազմակերպություններ: Վրաստանի իշխանությունները հայտնում են, որ օրենքը կոչված է ապահովելու ՀԿ-ների ֆինանսավորման թափանցիկությունը:

Օրենքի ընդունումը Վրաստանում առիթ է դարձել բազմահազարանոց ցույցերի, որոնք վերածվել են իրավապահների հետ բախումների:

ԱՄՆ-ում եւ ԵՄ-ում նախազգուշացրել են, որ օրենքի ընդունումը կարող է սպառնալ Վրաստանի եվրաատլանտյան ինտեգրմանը:

ԱՐԱԲԿԻՐԻ ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏ

ՔՐԳՈՐԾՈՎ ԿԱՅԱՑՎԵԼ Է ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակում իրականացված քննչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալներով՝ պարզվել են Երեւան քաղաքի 2005-2007թթ. ընթացքում Արաբկիրի համայնքապետարանում ղեկավար պաշտոն զբաղեցրած անձի կողմից հանցավոր սխեմաների կիրառմամբ բազմադրվագ կոռուպցիոն հանցագործությունների կատարման հանգամանքներ:

Մասնավորապես, նշված անձը, իր սանիկ Ա.Ե.-ի օժանդակությամբ, Երեւանի քաղաքապետի եւ քաղաքապետարանի մի քանի պաշտոնատար անձանց կողմից իրենց պաշտոնեական լիազորություններն անցնելու, պաշտոնական կեղծիքների բազմաքայլ հանցավոր սխեմայով, «Արաբկիր» զբոսայգու՝ պետական սեփականություն հանդիսացող, օտարման ոչ ենթակա տարածքից 1500 քմ մակերեսով հողատարածքը դուրս է բերել ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումներից, դարձրել օտարման ենթակա: Դրա վրա կառուցված 89.5 քմ ընդհանուր մակերեսով ինքնակամ շինությունը պաշտոնեական կեղծիքների միջոցով ճանաչվել է օրինական, եւ այդ շինությունը՝ 3.302.550 ՀՀ դրամ, իսկ նշված կառույցի համար առանձնացված 1500 քմ մակերեսով հողամասը՝ 16.065.000 ՀՀ դրամ կադաստրային արժեքներով (այն դեպքում, երբ նշված հողամասի եւ կառույցի շուկայական արժեքը կազմել է 142.000.000 ՀՀ դրամ) ձեւականորեն օտարվել է Ա.Ե.-ին:

Գույքի իրական պատկանելությունը, հանցավոր ծագման աղբյուրը թաքցնելու նպատակով, 2007 թվականի ապրիլին Երեւանի քաղաքապետարանի հաշվեհամարին ընդամենը 75.491.988 ՀՀ դրամ մուտքագրելուց հետո՝ այն դեպքում, երբ հողամասի շուկայական արժեքը կազմել է 354.000.000 ՀՀ դրամ, նշված գույքերի նկատմամբ ձեւականորեն գրանցվել է նշված պաշտոնատար անձի հոր սեփականության իրավունքը:

Պարզվել է նաեւ, որ Արաբկիրի համայնքապետարանում ղեկավար պաշտոն զբաղեցրած նշված անձը, կեղծ տվյալներով փաստաթղթեր կազմելով, որպես աճուրդի կազմակերպիչ, ձեւական աճուրդի միջոցով օտարել է Մամիկոնյանց փողոցում գտնվող 79 քմ ընդհանուր մակերեսով՝ 16.950.000 ՀՀ դրամ շուկայական արժեքով, համայնքին պատկանող բնակարանը:

Նախաքննությամբ ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա եւ հաշվի առնելով վաղեմության ժամկետը լրանալու հիմքով՝ քրեական հետապնդում չիրականացնելուն չհամաձայնելու հանգամանքը՝ Արաբկիրի համայնքապետարանում 2005-2007թթ. ընթացքում ղեկավար պաշտոն զբաղեցրած անձին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ), 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ), 314-րդ հոդվածի 1-ին մասով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով (4 դրվագ):

Ավագանու անդամների մի մասին մեղադրանքներ են ներկայացվել նախկին քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով /մի մասին՝ 5 դրվագ, մի մասին՝ 4 դրվագ/: Մի մասի նկատմամբ հանրային քրեական հետապնդումը դադարեցվել է վաղեմության ժամկետը լրանալու հիմքով:

Նախաքննությունը, նշված նախկին պաշտոնատար անձի եւ նախկին ավագանու 4 անդամների մասով, ավարտվել է. վարույթի նյութերն ուղարկվել են հսկող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար:

Երեւանի քաղաքապետի եւ եւս երկու անձի վերաբերյալ անջատված մասով քրեական վարույթը, մեղադրական եզրակացությամբ, դեռեւս 2023թ. օգոստոսին ուղարկվել էր դատարան, ընթանում է դատաքննություն:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԴԵՊՔ

Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում նախաձեռնված քրեական վարույթով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի երկու գլխավոր օպերլիազորներ տնտեսվարողներից ստացել են ընդհանուր 1,500,000 ՀՀ դրամ կաշառք՝ նրանց կողմից կատարված՝ հարկային օրենսդրության պահանջների խախտումները չարձանագրելու համար:

Մասնավորապես՝ նախաքննությամբ հիմնավորվել է, որ ավագ օպերլիազոր Կ. Ա.-ն իր գործընկերոջ՝ ավագ օպերլիազոր Վ. Ա.-ի հետ հայտնաբերել են անհատ ձեռնարկատիրոջ կողմից հարկային օրենսդրության պահանջների առերեւույթ խախտումների հատկանիշներ՝ կապված իրացման շրջանառության հետ: Այդ կապակցությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ չանցկացնելու, ինչպես նաեւ հետագայում հնարավոր ստուգումների ընթացքում կատարված խախտումները հայտնաբերվելու դեպքում պատասխանատվությունից խուսափելուն աջակցելու նպատակով ՊԵԿ վերը նշված պաշտոնատար անձինք ձեռնարկատիրոջից պահանջել եւ 2023 թվականի դեկտեմբերի 29-ին նրանից որպես կաշառք ստացել են 1,000,000 ՀՀ դրամ, որը բաժանել են միմյանց միջեւ:

Կաշառք ստանալու համար ՊԵԿ գլխավոր օպերլիազորներ Կ. Ա.-ին եւ Վ. Ա.-ին մեղադրանքներ են ներկայացվել:

Կ. Ա.-ի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան՝ ըստ էության քննելու համար:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆ

ԿՈՉՈՒՄ՝ ԼՐԱԳՐՈՂԻՆ ՀԱՐՎԱԾՈՂ ՏԵՂԱԿԱԼԻՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի երկու տեղակալներին Հանրապետության տոնի առթիվ շնորհվել են բարձրագույն դասային աստիճաններ:

Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրերով Հանրապետության տոնի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Արտակ Մկրտիչի Պողոսյանին շնորհվել են արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճաններ:

Ինչո՞վ է հայտնի դարձել հանրությանը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի նոր կոչման արժանացած տեղակալը. ինչպես իր ղեկավարը, նա եւս լրագրողների դեմ գործողություններով է աչքի ընկել: 2014թ. փետրվարի 12-ին Մաշտոցի պողոտայում ՀԱԿ ակտիվիստները Մարտի 1-ի հանրահավաքի մասին իրազեկման ակցիա են իրականացրել: Իրազեկման աշխատանքներին խոչընդոտել էին: Դեպքից հետո ոստիկանները ոչ թե խոչընդոտողներին, այլ ակտիվիստներին բերման էին ենթարկել, իսկ լրագրողների ձեռքից վերցրել էին տեսախցիկները: Բերման ենթարկվածների թվում են եղել «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի լրագրող Անի Գեւորգյանը եւ ilur.am կայքի օպերատոր Սարգիս Գեւորգյանը: Ինչպես հայտարարել էր լրագրող Անի Գեւորգյանը, ոստիկանության բաժնում ոստիկանության այն ժամանակվա Կենտրոնի բաժնի պետ Արտակ Պողոսյանը ձեռքով հարվածել էր իր դեմքին:

Անի Գեւորգյանի հաղորդման հիման վրա՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնատար անձը, իր պաշտոնեական դիրքն օգտագործելով, լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը) եւ 309-րդ հոդվածի 2-րդ մասի (պաշտոնեական լիազորություններն անցնելը, որը զուգորդվել է բռնություն, զենք կամ հատուկ միջոցներ գործադրելով) հատկանիշներով:

Դեպքից ամիսներ անց ՀՔԾ-ն կարճել էր քրեական գործով վարույթը՝ «հանցագործության հատկանիշների բացակայության» հիմքով: Անին պատմել էր, որ քրեական գործը կարճել են այն պատճառաբանությամբ, թե, իբր, ոստիկաններն իր նկատմամբ բռնություն էին գործադրում իր իսկ անվտանգության համար:

Դեպքին հաղորդող օրերին ոստիկանությունում նշանակվել էր ծառայողական քննություն, սակայն քննությունը կասեցված էր, քանի որ ՀՔԾ-ում հարուցվել էր քրեական գործ: Դեպքից 1 տարի 5 ամիս անց քրեական գործը կարճելիս ոստիկանությունը համարել էր, որ խախտումներ չեն եղել: Անցնելով ներպետական բոլոր ատյաններով՝ լրագրող Անի Գեւորգյանը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 27-ից 29-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 147 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

2 ՔՈՀ՝ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ

Մայիսի 26-ի ջրհեղեղի պատճառով Նոյեմբերյան համայնքի 2 բնակիչ զոհվեց: Այդ օրը լրացավ Ղեղձավան գյուղի բնակիչ Սարիբեկ Բալյանի 39-ամյակը: Իր ծննդյան տարեդարձին նա խեղդվեց Շնող գյուղի մոտ, երբ աշխատանքից տուն էր վերադառնում: Սարիբեկը ռեստորանում մատուցող էր աշխատում: Նա անչափահաս 2 երեխաների(տղա եւ աղջիկ) հայր էր: Հաղթանակ գյուղի բնակիչ, 1948 թվականին ծնված Ավագ Ավագյանի դին գետից հանվել է Պտղավանի մարզադաշտի մոտ: Ա. Ավագյանը ծննդով սահմանամերձ Ոսկեվան գյուղից էր, ապրել, արարել է Հաղթանակում: Խորհրդային շրջանում Հայաստանում ճանաչված այգեգործական բրիգադի բրիգադավար էր: Մայիսի 26-ի ջրհեղեղից մեծապես տուժել են Լոռու մարզի Թումանյանը, Ալավերդին, Սանահին կայարանը, Ախթալան, Ալավերդի ու Ախթալա համայնքների գյուղերը: Ինչպե՞ս եղավ, որ Դեբեդի ներքին հոսանքում՝Բագրատաշենում ,Դեբեդավանում, ուր տեղատարափ անձրեւներից վարարած գետի հոսքն անհամեմատ մեծ էր, կամուրջներ չքանդվեցին, մեծ ավերածություններ չեղան: Պատճառներից հիմնականն այն է, որ ներքեւում, հովտում գետը հնարավորություն ուներ փռվելու,տարածվելու, իսկ վերին հոսանքում սեղմված լինելով նեղ հունի մեջ՝ Դեբեդը դուրս եկավ հունից եւ ավերածություններ գործեց: Ալավերդցիները պետք է հարցնեն իրենց ՔՊ-ական համայնքապետին, թե նա ինչո՞ւ էր «Սիսիանի ԲՈՒԱՏ» ճանապարհաշինական ընկերությանը թույլատրել մեծ քանակությամբ հող լցնել Դեբեդ, որն էլ հեղեղման ժամանակ փոխեց գետի հունը եւ մեծ ավերածությունների պատճառ դարձավ: Ընդամենը մեկ տարի առաջ է պաշտոնապես շահագործման հանձնվել Ասիական բանկի վարկային միջոցներով կառուցապատված Թումանյան-Բագրատաշեն ավտոճանապարհը, որի շինարարության համար տասնյակ միլիոնավոր դոլարներ են ծախսվել: Ճանապարհի հիմնանորոգման նախագծողները, այն կառուցողները ինչո՞ւ Թումանյանի, Ախթալայի, Ալավերդու հատվածներում ափապաշտպան ամրություններ չեն նախատեսել ու կառուցել, ո՞վ է պատասխան տալու մարդկային զոհերի, նյութական մեծ վնասների, քանդված ճանապարհի, ջրի քշած միլիանավոր դոլարների համար. թե՞ ամեն ինչ բարդելու են բնական տարերքի, ֆորս-մաժորի վրա:

ԲԱԳՐԱՏԱՇԵՆՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ ՄԵԾ ՉԵՆ

Բագրատաշեն գյուղի վարչական ղեկավար Սարգիս Անտոնյանից տեղեկացանք, որ մայիսի 27-ի առավոտից Այրում-Բագրատաշեն ավտոճանապարհը բաց է: Մի հատվածում ճանապարհը հեղեղից վնասվել է, այդ հատվածում երթեւեկը միակողմանի է: Վարարած Դեբեդը Բագրատաշենից ծառեր է քշել-տարել. հեղեղել է գյուղի գետափնյա՝ 4-րդ փողոցի տների նկուղները: Ս. Անտոնյանն ասաց, որ մայիսի 26-ի ջրհեղեղից Բագրատաշենը մեծ կորուստներ չունի, թեեւ հեղեղը գյուղից 4 ուլ, 20 հավ է քշել-տարել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՆՀԱՆԳՍՏԱՑՆՈՂ ՑՈՒՑԱՆԻՇ

ԿԱՐՄՐՈՒԿԻ ՎԱՐԱԿՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՄՊԵՐԸ

Հանրապետությունում կարմրուկի վարակվածության տեմպերն անհանգստացնող են: Բերովի դեպքերից բացի, ոչ միայն ներառում են առկա ակտիվ օջախներ, այլեւ վարակվածների թիվն է ավելանում:

Հայաստանի իմունականխարգելման ազգային ծրագրի ղեկավար, ԱՆ Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի գլխավոր տնօրենի տեղակալ Գայանե Սահակյանը նշեց, որ եթե ամբողջ 2023 թվականին գրանցվել էր 545 լաբորատոր հաստատված դեպք, ապա այս տարվա ընթացքում արդեն 420 հաստատված դեպք կա: Մասնագետը համեմատության համար նշեց, որ եթե նախորդ տարվա մարտին գրանցվել էր կարմրուկի վարակման 50, ապա 2024-ի մարտին եղավ 136 դեպք: Ներկայում ակտիվ օջախներ կան հանրապետության բոլոր մարզերում: Ամենաշատ դեպքերը գրանցվել են Գեղարքունիքի մարզում, Կոտայքում եւ Երեւանում: Կարմրուկ գրանցվել է տարբեր տարիքային խմբերում: Թիրախում ինչպես երեխաներն են, այնպես էլ մեծահասակները:

«Բոլորն ասում են, որ կարմրուկը մանկական վարակիչ հիվանդություն է, բայց վիճակագրությունը ցույց է տալիս, որ ցանկացած մարդ կարող է կարմրուկով վարակվել: Կոնկրետ կարմրուկի լաբորատոր հաստատված 250 դեպք ունեցել ենք երեխաների շրջանում եւ 170 լաբորատոր հաստատված դեպք՝ մեծահասակների շրջանում: Այնպես որ, բոլոր տարիքային խմբերն էլ թիրախում են», - ասաց Գայանե Սահակյանը:

2022 թվականի վերջից ամբողջ աշխարհում կարմրուկի հետ կապված համաճարակային իրավիճակը սրվեց: Հայաստանում հիվանդության տարածվածության ակտիվություն նկատվեց 2023 թվականին, երբ փետրվարին հանրապետությունում գրանցվեց «բերովի» դեպք: Մինչ այդ, Հայաստանում տեղական դեպքերի փոխանցում չէր եղել: Ավելին՝ առողջապահության համաշխարհային կազմակերպության բնորոշմամբ Հայաստանը համարվում էր կարմրուկից էլիմինացված երկիր: Դա նշանակում է, որ վիրուսի շրջանառություն տեղում չէր արձանագրվել: Այսօր արդեն այլ պատկեր ունենք: Մասնագետը ցավով նշում է, որ ընդհանուր լաբորատոր հաստատված դեպքերի 92 տոկոսի պարագայում բուժառուները կամ չպատվաստված են կամ թերի են պատվաստված: Վարակվածության միտումները եւս մեկ անգամ ընդգծում են պատվաստման կարեւորությունը: Որքանո՞վ են քաղաքացիները ականջալուր մասնագետների հորդորներին:

«Այդքան էլ ականջալուր չեն, որովհետեւ հիվանդանում են այն երեխաները, որոնց ծնողները համառորեն հրաժարվում են պատվաստումներից: 2023 թվականի մարտից, երբ երկրում համաճարակային առումով անկայուն իրավիճակ էր, անընդհատ հորդորել ենք, որ պատվաստվեն: Ասեմ, որ շատ քչերին ենք կարողացել բերել պատվաստման»,- ասաց մասնագետը:

Կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ հանրապետությունում մոտ 8000 չպատվաստված երեխա կա: Շատերի մոտ թյուր կարծիք կա, թե կարմրուկը թեթեւ ընթացքով հիվանդություն է, սակայն մանկական-վարակաբան Անահիտ Առաքելյանը հիշեցնում է, որ դա այդպես չէ: Հնարավոր են բարդություններ, որոնք կարող են անելանելի վիճակ ստեղծել:

«Կարմրուկի դեպքում բարդություններից առավել հաճախ հանդիպում են թոքաբորբերը, էնցեֆալիտները: Այստեղ ուզում եմ ընդգծել, որ երբեմն բարդություններն առաջանում են, երբ տանն ինքնաբուժությամբ են զբաղվում, չեն դիմում մասնագետներին: Փոխարենը կարող են դիմել ու ստանալ համապատասխան բուժում: Իմ հորդորն է՝ խնդիրների դեպքում ինքնաբուժությամբ չզբաղվել», - ասաց Անահիտ Առաքելյանը:

Մասնագետներն ընդգծում են, որ պատվաստվելը շատ կարեւոր է: Փորձը ցույց է տալիս, որ կանխարգելիչ պատվաստումները ստանալու դեպքում 95 տոկոս եւ բարձր արդյունավետություն է գրանցվում:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԹԱՂԱԾԱԾԿ ԴԱՀԼԻՃԻ ՀՈՐԻՆՎԱԾՔԸ

Պաշտամունքային կառույցի թաղածածկ դահլիճ տիպը Արցախում, 12-13-րդ դարերում շատ տարածված հորինվածք է: Այն երկրամասի միջնադարյան ճարտարապետական դպրոցի առանձնահատկություններից է: Այս հորինվածքը կիրառվել է արցախյան վանքերի կազմում ներգրավված բոլոր եկեղեցիների համար («Բռի եղցի», «Օխտը եղցի», Կոշիկ անապատ, Գտչավանք եւ այլն): Մինչդեռ Հայաստանի մյուս ճարտարապետական դպրոցներում այն հանդիպում է մատուռներում եւ փոքր եկեղեցիներում:

Քննությամբ պարզվել է, որ թաղածածկ դահլիճ տիպի եկեղեցիներին բնորոշ է ուղղանկյուն խորանի զանգվածային կիրառումը: Արցախի եկեղեցիների եւ հուշարձանախմբերի կառուցումը, ինչպես որ Հայաստանի ողջ տարածքում, իրականացվել է քարով (տուֆ, բազալտ, ֆելզիտ, կրաքար)՝ «միդիս» եղանակով, կրաշաղախի կիրառությամբ: Օգտագործվել է ինչպես մաքուր տաշված քար, այնպես էլ՝ կոպտատաշ:

Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում (MONUMENT WATCH)

«ՍՈՖԹԿՈՆՍՏՐԱԿՏ»-Ը ՀՀ 11-ՐԴ ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆ Է

Հայաստանի ամենախոշոր SS ընկերություն հանդիսացող «ՍոֆթԿոնստրակտ» ՓԲԸ-ն արդեն երրորդ տարին անընդմեջ իր հաստատուն տեղն է զբաղեցնում Հայաստանի խոշոր հարկ վճարող կազմակերպությունների քսանյակում:

2022 թվականին այն եղել է 18-րդ խոշոր հարկատուն եւ առաջինը՝ SS ընկերությունների շարքում, 2023 թվականին զբաղեցրել է խոշոր հարկ վճարողների 20-րդ հորիզոնականը եւ կրկին առաջինն էր՝ SS ընկերությունների մեջ: Իսկ 2024 թվականի առաջին եռամսյակի տվյալներով «ՍոֆթԿոնստրակտ» ՓԲԸ-ն ոչ միայն շարունակում է մնալ առաջինը SS ընկերությունների շարքում որպես խոշոր հարկատու, այլեւ բարձրացել է այդ անվանացանկի 11-րդ հորիզոնական:

2024 թվականի առաջին եռամսյակում «ՍոֆթԿոնստրակտ»-ի կողմից վճարված հարկերի ծավալը գերազանցել է 3,6 միլիարդ դրամը: Ընդ որում, պետք է նշել, որ այս ծավալը վերաբերում է գերազանցապես տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ընկերության կողմից իրականացված գործունեությանը: Եթե վերոնշյալ ցուցանիշին հավելենք նաեւ խաղային արդյունաբերության ոլորտում իրականացված գործունեության արդյունքում «ՍոֆթԿոնստրակտ» ՓԲԸ վճարած հարկերը, ապա կարելի է ասել, որ 2024 թվականի առաջին եռամսյակում ընկերությունն զբաղեցրել է 9-րդ տեղը մեր երկրի խոշոր հարկատուների ցանկում:

Պատասխանատվություն, թափանցիկություն եւ արդյունավետ կորպորատիվ կառավարում՝ «ՍոֆթԿոնստրակտ» ՓԲԸ գործունեությունը կառուցվում է այս կարեւորագույն սկզբունքների վրա, որոնք հետեւողականորեն ամրապնդվում են: Հենց այս գործելաոճն է ապահովել հարկատուների ցանկում բարձր ցուցանիշի արձանագրումը, որի հիման վրա կարելի է վստահորեն պնդել՝ «ՍոֆթԿոնստրակտ»-ը ոչ միայն Հայաստանի Հանրապետության խոշորագույն SS ընկերությունն է, այլեւ խոշոր հարկատուներից մեկը եւ շարունակելու է ամրապնդել իր առաջատար դիրքերը:

● *Անցած 2 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 18 պատահար. 3 մարդ զոհվել է, 23-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

OZON-Ի ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

ԱՌԱՋԻՆ ՖՈՒԼՖԻԼՄԵՆՏ ԿԵՆՏՐՈՆԸ

Ozon-ը հայտարարում է Հայաստանում առաջին ֆուլֆիլմենտ (fulfillment) կենտրոնի գործարկման մասին: Երեւանում տեղակայված պահեստային համալիրը կիրականացնի առցանց պատվերների մշակման ամբողջական ցիկլը՝ տարբեր կատեգորիաների ապրանքների ընդունումից մինչեւ ծանրոցների ձեւավորումը: Լոգիստիկ օբյեկտը հայ վաճառողներին թույլ կտա տեղաբաշխել իրենց ապրանքները եւ առաքել դրանք ինչպես Ռուսաստան, այնպես էլ Հայաստանի ամբողջ տարածք:

Նախկինում Ozon-ի Հայաստանյան լոգիստիկ ենթակառուցվածքը ներառում էր 2000 մՄ ընդհանուր մակերեսով տեսակավորման կենտրոն: Դեպի Ռուսաստան եւ հանրապետության ամբողջ տարածքով ապրանքների առաքման ժամկետն արագացնելու համար մարքեթփլեյսը 1,5 անգամ ընդլայնել է լոգիստիկ օբյեկտը եւ դրա վրա գործարկել առցանց պատվերների մշակման ամբողջական ցիկլ. վաճառողները կարող են բերել իրենց ապրանքները մարքեթփլեյսի պահեստ, որտեղ դրանք կփաթեթավորվեն եւ կապահովեն ինչպես Հայաստան, այնպես էլ Ռուսաստանի Դաշնություն ուղարկելու նպատակով:

Օբյեկտի ընդհանուր մակերեսը ավելի քան 2500 մա է: Ներկա փուլում լոգիստիկ կենտրոնն ի վիճակի է պահել մինչեւ 50.000 ապրանք: Ֆուլֆիլմենտ կենտրոնը կկարողանա մշակել օրական մինչեւ 2000 պատվեր:

«Մենք տեսնում ենք, թե որքան արագ է աճում մեր վաճառողների եւ գնորդների թիվը Հայաստանում, եւ մենք ամեն օր աշխատում ենք նրանց համար մեր ծառայության որակը բարելավելու ուղղությամբ: Երեւանում ֆուլֆիլմենտ կենտրոնի գործարկումը զգալիորեն կարագացնի պատվերների մշակման գործընթացը, կինայի վաճառողների՝ ապրանքների փաթեթավորման վրա ծախսվող ժամանակն ու գումարը, եւ որ ամենակարեւորն է՝ կապահովի պատվերների ավելի արագ առաքում մեր 49 միլիոն գնորդներին», - նշեց «Ozon Հայաստան»-ի կոմերցիոն տնօրեն Աշոտ Հախվերդյանը:

Ozon-ը հայկական շուկա է մուտք գործել 2023 թվականի ամռանը: Ընկերությունը սկսել է վաճառքը երկրի բնակիչների համար, բացել ներկայացուցչություն եւ լոգիստիկ կենտրոն Երեւանում:

Ընկերությունը վերջերս գործարկել է սեփական սուրհանդակային առաքման ծառայությունը Երեւանում:

«ԿԱՍՊԵՐՍԿԻ»

ԻՆՉ ԿԻԲԵՌՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԵՆ ԱՐԴԻԱԿԱՆ

«Կասպերսկի» ընկերությունը ներկայացրել է 2024-ին եւ 2023-ի առաջին եռամսյակում «Ռուսաստանի եւ ԱՊՀ-ի համար սպառնալիքների լանդշաֆտը» հաշվետվությունը: Փաստաթղթում Kaspersky Cyber Threat Intelligence թիմը նկարագրել է արդիական սպառնալիքները, կազմել գրոհների մարտավարությունների, տեխնիկաների եւ ընթացակարգերի, ինչպես նաեւ կիբեռոիսկերի նվազեցման միջոցների ցանկը:

Հաշվետվության հիմնական եզրակացությունները: Վերջին մեկուկես տարվա ընթացքում հաքտիվիզմի սպառնալիքը շարունակել է թափ հավաքել: Գրոհողներն ուշադրություն են դարձնում թույլ պաշտպանությամբ կազմակերպություններին, առանց որոշակի ճյուղի հետ կապելու՝ օգտագործելով բաց ցանցում առկա ցանկացած գործիք: Միեւնույն ժամանակ, ակտիվությունը չեն նվազեցնում եւ խմբերը, որոնք գրոհում են լրտեսության եւ ֆինանսական շահի նպատակով, օրինակ՝ ծածկագրողները:

Չարագործները նախընտրում են չփոխել իրենց սցենարները եւ գրոհում են կիբեռանվտանգության տեսանկյունից ամենաքիչ պատրաստված կազմակերպությունները, օրինակ՝ շահագործում են արդեն հայտնի եւ տարածված խոցելիություններն այն պրոդուկտներում, որոնցից օգտվում են շատ կազմակերպություններ:

Խոցելիությունները կորպորատիվ ցանցի վրա գրոհներում: Ամենաակտիվ շահագործվող CVE-ների կեսից ավելին գրանցվել է անցյալ տասնամյակի վերջին: 2023-ին եւ 2024-ի առաջին եռամսյակում ամենատարածվածը CVE- 2021-44228 (Log4Shell) կրիտիկական խոցելիությունն էր Apache Log4j շտեմարանում, որը թույլ է տալիս հեռավար կերպով կոդ գործարկել: Երկրորդ տեղում է Microsoft Windows-ի եւ Microsoft Windows Server-ի CVE-2019-0708 (BlueKeep) խոցելիությունը: Բացի կոդի հեռավար գործարկումից, այն նաեւ թույլ է տալիս տեսնել գաղտնի տեղեկատվություն, բարձրացնել արտոնությունները եւ կեղծել օգտվողի միջերեսը: Առավել հաճախ օգտագործվածների եռյակում է նաեւ OpenSMTPD փոստային սերվերի CVE-2020-7247 խոցելիությունը, որի միջոցով հնարավոր է հեռավար գործարկել կոդը եւ բարձրացնել արտոնությունները:

Խոցելիությունները՝ վերջնական սարքերի միջոցով գրոհներում:

Ռուսաստանում եւ ԱՊՀ-ում կորպորատիվ սարքերի վրա գրոհների համար չարագործներն առավել հաճախ օգտագործում են 7-Zip եւ WinRAR արխիվատորների, ինչպես նաեւ Google Chrome բրաուզերի խոցելիությունները: 2024-ի առաջին եռամսյակում եւ 2023-ին Ռուսաստանում եւ ԱՊՀ-ում կազմակերպությունների վրա գրոհներում հարձակվողները շահագործել են 7-Zip-ի սողանցքներ (CVE-2023-31102/CVE-2023-40481 եւ CVE-2022-29072): Ամենատարածվածներից են նաեւ WinRAR-ի (CVE-2023- 38831) եւ Google Chrome-ի (CVE-2023-1822/CVE-2023-1812/CVE-2023-1813 եւ այլն) խոցելիությունները:

Ամենաակտիվ օգտագործվող սողանցքների մեծ մասը (10-ից 9-ը) թույլ է տալիս կատարել վնասակար կոդ: Ընդ որում, գրեթե բոլորը գրանցվել են 2023 թվականին:

Ծածկագրող ծրագրերի սպառնալիքը: Չարագործներն օգտագործում են խոցելիություններն այդ թվում ծածկագրող ծրագրերի օգտագործմամբ գրոհների համար: 2024-ին դրանք շարունակում են մնալ ամբողջ աշխարհի կազմակերպությունների գլխավոր սպառնալիքներից մեկը. նման գրոհների թիվը կայուն բարձր մակարդակի վրա է, աճում է փրկագնի ընդհանուր չափը, ընդ որում, ընկերությունները բախվում են ապածածկագրման բարդությանը:

2024-ի առաջին եռամսյակում ծածկագրող ծրագրերի ամենատարածված տեսակների առաջին եռյակում են Dcryptor, Lockbit-ը եւ Conti տրոյացիները: Անցյալ տարվա նույն ժամանակահատվածում եռյակը հետեւյալն էր. Phobos, Lockbit եւ Conti:

«Հաշվետվությունը պատրաստելիս մեր նպատակն էր ներկայացնել կիբեռսպառնալիքների արդի լանդշաֆտի լիարժեք ուսումնասիրություն, ինչպես նաեւ եւս մեկ անգամ ցույց տալ, որ տեղեկատվական անվտանգության ճիշտ կառուցված գործընթացները եւ գրոհողների մարտավարությունների, տեխնիկաների եւ ընթացակարգերի վերլուծությունը շարունակում են մնալ կիբեռսպառնալիքներին հակազդելու հուսալի միջոց: Մասնավորապես, կազմակերպությունների վրա գրոհներում խոցելիությունների օգտագործումը կանխելու համար կարեւոր է կառուցել դրանց վերացման գործընթացը կամ Patch Management-ը: Անհրաժեշտ է նաեւ օգտագործել համալիր պաշտպանական լուծումներ, որոնք թույլ են տալիս օպերատիվ կերպով բացահայտել սպառնալիքները եւ վերացնել դրանք: Բացի տեխնիկական միջոցներից, արժե ուշադրություն դարձնել աշխատակիցների թվային գրագիտության բարձրացմանը, քանի որ շատ դեպքերում գրոհները հնարավոր են դառնում մարդկային գործոնի պատճառով», - մեկնաբանում է «Կասպերսկի» ընկերության սպառնալիքների ընդլայնված հետազոտության բաժնի ղեկավար Նիկիտա Նազարովը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

«ԲԻԷԹԻ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ՍՊՈՐՏՆԵՐԻ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերն ըստ ներկայացված հերթականության՝

- Գեղարքունիքի մարզ, համայնք Սեւան ք., Գրիբոյեդովի փողոց, 3 շենք, 15 հասցեում գտնվող 76,6 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15800000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Կենտրոն, Պարոնյան փողոց, 22 շենք, 27 հասցեում գտնվող 38,9 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 38390000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Նոր-Նորք, Գյուլիքեխվյան փողոց, 5 շենք, 3 հասցեում գտնվող 79,2 ք.մ. բնակարանի եւ 8,8 քմ ինքնակամ շինության: Լոտի մեկնարկային գինը՝ 33780000 ՀՀ դրամ:
- ք.Երեւան, Նոր-Նորք, Գ. Բաղյան փողոց, 1-ին նրբանցք, 6 շենք, 28 հասցեում գտնվող 66,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 26110000 ՀՀ դրամ:
- ք. Երեւան, Աջափնյակ, Նորաշեն 36 շենք, 119 հասցեում գտնվող 78,4 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 30190000 ՀՀ դրամ: - ք. Երեւան, Նոր-Նորք, Մայակ թաղամաս, 3 շենք, 26 հասցեում գտնվող 76,74 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 31180000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Վանաձոր, Վանաձոր ք., Տարոն-1 թաղամաս, 3 շենք, 10 հասցեում գտնվող 113,51 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15750000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Աշտարակ, Աշտարակ ք., Ա. Մանուկյան փողոց, 7 շենք, 50 հասցեում գտնվող 46,7 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 15930000 ՀՀ դրամ:
- Կոտայքի մարզ, համայնք Արզնի, 5-րդ փողոց, 121 հասցեում գտնվող 104,4 ք.մ. բնակելի տան, 35,64 քմ ավտոտնակի, 9,68 քմ բաղնիքի, 19,8 քմ անասնաշենքի, 67,05 քմ անասնաշենքի, 107,1 քմ ծածկի, 32,2 քմ ծածկի, 43,5 քմ ծածկի եւ 0,153 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 45500000 ՀՀ դրամ:
- Արագածոտնի մարզ, համայնք Ապարան, Ապարան ք., Ա. Գրիբոյեդովի փողոց, 2-րդ փակուղի, 7 հասցեում գտնվող 235,8 ք.մ. բնակելի տան եւ 0,095 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 20540000 ՀՀ դրամ:
- Տավուշի մարզ, համայնք Աչաջուր, 49-րդ փողոց, 14 հասցեում գտնվող 506,5 ք.մ. բնակելի տան, 35,7 քմ ավտոտնակի, 26,2 քմ շվաքարանի եւ 0,274 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 19600000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արտաշատ, Արտաշատ ք., Մարքսի փողոց, 6 շենք, 27/1 հասցեում գտնվող 58,9 ք.մ. բնակարանի եւ 32,8 քմ տարածքի (նպատակային նշանակությունը հասարակական է՝ առեւտրի սրահ): Լոտի մեկնարկային գինը՝ 42560000 ՀՀ դրամ:
- Արմավիրի մարզ, համայնք Արմավիր, Արմավիր ք., Մ. Գորկու փողոց, 27 հասցեում գտնվող 78 ք.մ. բնակելի տան, 41 քմ ավտոտնակի, 7,7 քմ սանհանգույցի, 7,1 քմ կաթսայատան, 34,6 քմ ծածկի, 2,05 քմ /5,1 խմ, 10,2 գծամետր/ պարսպի եւ 0,06 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 21970000 ՀՀ դրամ:
- Արարատի մարզ, համայնք Արարատ, Արարատ ք., Աղբյուր Սերոբի փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 6 հասցեում գտնվող 100,9 ք.մ. բնակելի տան, 12,9 քմ անասնաշենքի, 27,9 քմ անասնաշենքի եւ 0,06 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 16090000 ՀՀ դրամ:
- Լոռու մարզ, համայնք Սպիտակ ք., Ոսկյան փողոց, 128 հասցեում գտնվող 218.5 ք.մ. բնակելի տան, 41 ք.մ. անասնաշենքի եւ 0.352 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 25000000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 17.06.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 18.07.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «ԲԻԷԹԻ» ՍՊԸ-ի դրամարկղում աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավիկամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում: Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով:Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԻՆՔՆԱՔԱՆԴՈՒՄԻ ԸՆԹԱՑՔԸ ՊԻՏԻ ԿԱՆԳ ԱՌՆԻ

«Ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը, ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ոչ ալ որեւէ այլ դառն հարուած կրնան խարխլել Հայ Առաքելական Եկեղեցւոյ հիմերը». հոգեւորականության անդրադարձը Սարդարապատում տեղի ունեցած միջադեպին:

Մայիսի 28-ին Հանրապետության օրվա առթիվ Մայր Աթոռ Սուրբ Էծմիածնի եպիսկոպոսաց դասը գլխավորությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելել էր Սարդարապատի հուշահամալիր, որտեղ ոստիկանական ուժերը պատ էին կազմել եւ թույլ չէին տվել, որ Վեհափառ հայրապետը մոտենա հուշահամալիրին:

Միջադեպը մեծ աղմուկ բարձրացրեց եւ մի խումբ հոգեւորականներ անհատապես, ինչպես նաեւ Հայ Առաքելական եկեղեցու տարբեր աթոռներ, անդրադարձ կատարեցին միջադեպին՝ դատապարտելով իշխանության կողմից Հայ Առաքելական եկեղեցու եւ դրա սպասավորների նկատմամբ առկա վերաբերմունքը:

Առաջին հայտարարությունը տարածել էր Մայր Աթոռը՝ նշելով. «Մայիսի 28-ին Հանրապետության տոնի առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ՝ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանների, Սարդարապատի հուշահամալիր այցի ընթացքում ոստիկանների կողմից Հայոց Հայրապետի ու եկեղեցականների նկատմամբ դրսեւորած դատապարտելի պահվածքը եւ հուշահամալիրի տարածք մուտք գործելու հարուցված արգելքներն ու բռնի գործողությունները հերթական դրվագն են իշխանությունների ամոթալի ու ապազգային գործունեության:

Փառք Տիրոջ, որ հակառակ ոստիկանների կողմից բռնությունների ու հարուցված արգելքների՝ Վեհափառ Հայրապետը հուշակոթողի առջեւ աղոթք բարձրացրեց առ Աստված մայիսյան հերոսամարտերում նահատակված քաջարի հայորդիների հոգիների հանգստության համար:

«Թող Երկնավոր Տերն անսասան պահի հայոց անկախ պետականությունը եւ հանապազ օրհնի ու ապահով եւ անվտանգ կյանք շնորհի համայն մեր ժողովրդին»:

Միջադեպին արձագանքեց նաեւ Մեծ ի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ առաջինը. «Իմացանք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին Սարդարապատ մուտքի ժամանակ ոստիկաններուն կողմէ եղած խոչընդոտին մասին: Խստօրէն կը դատապարտենք այս մեծապէս ամօթալի երեւոյթը, որ խոտոր կը համեմատի մեր ազգի վարքագիծին եւ բարոյական ու հոգեւոր արժէքներուն: Ո՞ւր կերթայ Հայաստանը՝ մեր սիրելի Հայրենիքը, որուն անկախութեան ու յաւերժութեան ի խնդիր դարեր շարունակ մեր սուրբերը աղօթեցին, մեր նախահայրերը ստեղծագործեցին եւ մեր նահատակները իրենց արիւնը թափեցին: Ինքնաքանդումի ու ինքնասպանութեան ներկայ ընթացքը պէտք է կանգ առնէ: Մեր եկեղեցին չի՛ կրնար անտարբեր մնալ ի տես Հայրենիքի քանդումին»:

Անդրադառնալով Սարդարապատում տեղի ունեցած միջադեպին՝ Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանը նշել է, որ Սարդարապատի հերոսամարտի ընթացքում՝ Հայ ժողովրդի համար այդ օրհասական օրերին, զինվորների, հրամանատարների, գյուղացիների եւ մտավորականների կողքին մեկ ձեռքին խաչը եւ մյուս ձեռքին զենքը բռնած մարտնչում էին նաեւ հոգեւորականները: Ամենայն հայոց կաթողիկոս Գեւորգ հինգերորդին խնդրում էին տեղափոխվել ավելի ապահով վայր՝ Սեւան, սակայն նա հրաժարվում է:

«Յանուն Սրբոց Յակոբեանց Ջինուորեալ Միաբանութեան խստագոյնս կը դատապարտենք ՀՀ Ոստիկանութեան ամօթալի եւ անպատուաբեր վարմունքը հանդէպ Ամենայն Հայոց Հայրապետի: Լիայոյս ենք, որ ՀՀ Ոստիկանութիւնը կը վերանայի իր գործելակերպն ու վերաբերմունքը հանդէպ Հայ Առաքելական Եկեղեցւոյ եւ Ամենայն Հայոց Հայրապետի՝ բացառելով նմանօրինակ միջադէպերու կրկնութիւնը ...Հայոց Եկեղեցին մշտապէս եղած է ու պիտի մնայ Հայի գոյութեան, Հայ մշակոյթի պահպանման, Հայոց պետականութեան շէնացման առհաւատչեան, ուստի ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը, ո՛չ հուրը, ո՛չ ջուրը եւ ոչ ալ որեւէ այլ դառն հարուած կրնան խարխլել Հայ Առաքելական Եկեղեցւոյ հիմերը», - գրված է հայտարարության մեջ:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

«Aktobe open»-Ի ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ

Հայաստանը ներկայացնող երկու շախմատիստները, ովքեր «Aktobe open»-ի՝ Վլադիմիր Դվորկովիչի հուշամրցաշարի առաջատարների թվում են:

Հայաստանից մրցաշարին մասնակցում են գրոսմայստերներ Շանթ Սարգսյանը եւ Մանուել Պետրոսյանը:

4 տուրերից հետո Պետրոսյանն էլ, Սարգսյանն էլ ունեն 3,5-ական միավոր եւ 7 առաջատարների թվում են:

«Aktobe open»-ին ընդհանուր առմամբ մասնակցում է 90 շախմատիստ՝ աշխարհի 22 երկրից: Այն կեզրափակվի հունիսի 2-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՄԸ ՍԿՍՈՒՄ Է ՊԱՏՐԱՍՏՎԵԼ

«Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականն ուկրաինացի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովի ղեկավարությամբ մայիսի 27-ից ՀՖՖ Տեխնիկական կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիայում սկսում է պատրաստվել Սլովենիայի եւ Ղազախստանի հավաքականների հետ ընկերական հանդիպումներին».հաղորդում է ՀՖՖ-ի կայքը:

Հայաստանի թիմը Սլովենիային կիյուրընկալվի հունիսի 4-ին, Ղազախստանին կընդունի հունիսի 7-ին:

Հավաքին արդեն միացել են հետեւյալ ֆուտբոլիստները՝

Օգնյեն Չանչարեւիչ - «Նոա»
Արսեն Բեգլարյան - «Արարատ-Արմենիա»
Ստանիսլավ Բուչնեւ - «Փյունիկ»
Ստյոպա Մկրտչյան - «Օսիեկ» (Խորվաթիա)
Կամո Հովհաննիսյան - «Արարատ-Արմենիա»
Գեորգի Հարությունյան - «Կրասնոդար» (Ռուսաստան)
Անդրանիկ Հակոբյան - «Վալենսիա Մ-19» (Իսպանիա)
Դավիդ Դավիդյան - «Փյունիկ»
Էրիկ Սիմոնյան - «Ուրարտու»
Սերգեյ Մուրադյան - «Նոա»
Էդգար Գրիգորյան - «Արարատ-Արմենիա»
Վահան Բիչախչյան - «Պոգոն» (Լեհաստան)
Արտակ Դաշյան - «Փյունիկ»,
Հովհաննես Հարությունյան - «Փյունիկ»
Սոլոմոն Ուդո - «Փյունիկ»
Գեւորգ Տարախչյան - «Ուրարտու»
Ժիրայր Շաղոյան - «Արարատ-Արմենիա»
Արթուր Սերոբյան - «Արարատ-Արմենիա»
Գոռ Մանվելյան - «Նոա»
Արթուր Միրանյան - «Նոա»

Էդուարդ Սպերցյանը, Էդգար Սեւիկյանը եւ Նաիր Թիկնիզյանը թիմին կմիանան այսօր՝ ավելի ուշ: Վարազդատ Հարոյանը հավաքականի ճամբար կժամանի վաղը՝ մայիսի 28-ին: Տիգրան Ավանեսյանը Երեւան կժամանի հունիսի 3-ին, քանի որ հունիսի 2-ին տեղի կունենա Ռուսաստանի գավաթի խաղարկության սուպերեզրափակիչի «Բալթիկա» - «Զենիթ» հանդիպումը:

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ՝ ՆՎԻՐՎԱԾ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻՆ

Հունիսի 16-ին «Սանկտ Պետերբուրգի դալատներ» միջազգային երաժշտական փառատոնը Երեւանում՝ Ռուսաստանի վաստակավոր արտիստ Մարիա Սաֆարյանցի ղեկավարությամբ, ներկայացնում է միջազգային երաժշտական վիթխարի նախագիծ՝ նվիրված հայ մեծ արքա Տիգրան Երկրորդին:

Հնագույն Զվարթնոց տաճարի հարակից հրապարակի երեկոյան խորհրդավոր միջավայրում երաժշտության ներքո, կներկայացվի արքայից արքա լեգենդար Տիգրան Մեծի պատմությունը:

Երաժշտական փառատոնի հանդիսավոր բացմանն Իտալիայի եւ Ռուսաստանի օպերային բեմի համաշխարհային աստղեր այդ երեկո կմարմնավորեն Տիգրան Մեծի, չքնաղ Կլեոպատրայի, նենգ Միհրդատի եւ մյուս հերոսների կերպարները: Պատմության մեջ ամենաշատ օպերաները նվիրված են հենց Տիգրան Մեծին: Այդ երեկո կհնչեն հատվածներ ամենագեղեցիկ, այդ թվում՝ «Տարվա եղանակները» ստեղծագործության հեղինակ Վիվալդիի գործերից:

Հատուկ այս նախագծի համար նեապոլիտանական երաժշտական գրադարանը տրամադրել է իտալացի մեծագույն կոմպոզիտորներ Վիվալդիի, Սկարլատիի, Պերգոլեզիի, Պիչինիի օպերաների բացառիկ նոտաները: Այդ երեկո իր հազվագյուտ վոկալ վարպետությունը կցուցադրի հայտնի իտալացի կոնտրտենոր Աուրելիո Սկյավոնին: Համերգին մասնակցում են ռուսական եւ եվրոպական բեմերի առաջատար մենակատարները. սոպրանո Մարինա Զյատկովան, միջազգային եւ ռուսական մրցութների դափնեկիր, Մեծ եւ Մարիինյան թատրոնների մենակատար Բորիս Ստեփանովը, բաս, Ռուսաստանի վաստակավոր արտիստ, Միխայլովսկի թատրոնի մենակատար Կարեն Ակոպովը: Համերգը կանցնի կամերային նվագախմբի նվագակցությամբ, դիրիժոր՝ Քրիստիան Դելիզո: Հանդիսատեսի համար հատուկ նվեր կդառնա հայտնի ջութակահարուհի, փառատոնի գեղարվեստական ղեկավար Մարիա Սաֆարյանցի ելույթը: Հայաստանից ելույթ կունենա ծիրանափողի վարպետ, դուդուկահար, ՀՀ ժողովրդական արտիստ Գեւորգ Դաբաղյանը:

Հետաքրքրաշարժ երաժշտական պատմական բեմականացման ղեկավարը Արկադի Ղեւոնդովն է, պետերբուրգյան հայտնի ռեժիսոր բեմադրիչ, որը համագործակցում է այնպիսի թատրոնների հետ, ինչպիսիք են Բալթիական տունը, Մարիինյան թատրոնը, ինչպես նաեւ Մոսկվայի, Վլադիկովկասի թատրոնները:

● *Հունիսի 2-ին՝ ժամը 12:00-ին, Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Ալադին» մանկական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ է իրականացվում հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունը:

Մարինե Հայրապետյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ հաշմանդամ ճանաչված անձը կրկին բժշկասոցիալական փորձաքննության է ենթարկվում անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա կամ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ: Անձի կամ նրա ներկայացուցչի դիմումով վերափորձաքննությունն իրականացվում է հաշմանդամության խմբի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, անձի առողջական վիճակը վատթարանալու կամ օրգանիզմի ֆունկցիայի վերականգնման, իսկ փորձաքննական որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքերում՝ նաեւ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամությունը սահմանվում է մեկ տարի ժամկետով, երկու տարի ժամկետով, մինչեւ18 տարին լրանալը եւ անժամկետ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպիսի իրավական հետեւանքներ է առաջացնում ամուսնալուծության պետական գրանցումը: Որքա՞ն է կազմում պետական տուրքի դրույքաչափը:

Հրանուշ Հայթայան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնալուծության պետական գրանցմամբ ամուսինների միջեւ դադարում են ամուսնական հարաբերություններից ծագող բոլոր պարտավորությունները: Ամուսնության պետական գրանցման ժամանակ իր ազգանունը փոխած ամուսինն իրավասու է ամուսնալուծությունից հետո պահպանել այդ ազգանունը կամ իր ցանկությամբ ամուսնալուծության պետական գրանցումից հետո ստանալ իր մինչամուսնական ազգանունը: Ամուսնալուծության պետական գրանցման համար, ներառյալ վկայական տալը, գանձվում է պետական տուրք՝ 10.000 ՀՀ դրամ, ամուսնալուծության պետական գրանցումը ամուսնալուծվողների ցանկությամբ նշանակված օրը՝ լրացուցիչ վճար 100.000 ՀՀ դրամ:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացված դիմումը ուժի մեջ է վեց ամսվա ընթացքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամներից Անի Հովսեփյանն առաջին հաղթանակն է տոնել Փարիզի Օլիմպիական խաղերի վարկանիշային մրցաշարում:

Թաիլանդում ընթացող վարկանիշային վերջին մրցաշարում 66 կգ քաշային Անի Հովսեփյանը մրցեց Նիգերիայի ներկայացուցչի հետ եւ առավելության հասավ: Հովսեփյանի հաջորդ մենամարտը նախատեսված է մայիսի 31-ին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________________
Ազգանուն՝ ________________
Առաքման հասցե՝ ________________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ________________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 2 + 6 +14 + 18
Կոտայքի լեռներ	+ 2 + 6 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
Գեղարքունիք	+ 2 + 5 +13 + 17
Լոռի	+ 3 + 5 +13 + 16
Տավուշ	+ 7 + 10 +17 + 19
Արագածոտնի լեռներ	+ 2 + 4 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+ 7 + 11 +19 + 23

Արարատ	+9 + 12 +22 + 24
Արմավիր	+ 8 + 11 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 2 + 5 +13 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+ 8 + 12 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +14 + 17
ԼՂՀ	+ 5 + 9 +14 + 16
Երեւան	+ 16+ 18 + 21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.5.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*